ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔ

Համայնքի ղեկավարի հաշվետվություն՝ հանրությանը

2023 թվականի ընթացքում Մեծամոր համայնքի ղեկավարի

գործունեության մասին

Համայնքի ղեկավար՝ Վ. Խաչատրյան

ՄԵԾԱՄՈՐ 2024 թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների բնագավառում

Մեծամոր համայնքի ղեկավարը 2023 թվականի ընթացքում քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների բնագավառում, օրենքով սահմանված կարգով իրականացրել է քաղաքացիների ընդունելությունը, քննության է առել քաղաքացիների դիմումներն ու բողոքներըև ձեռնարկել է դրանց լուծմանն ուղղված համապատասխան միջոցներ: Տարվա ընթացքումՄեծամորի համայնքապետարան մուտք է եղել – գրություն, որոնք քննարկվել և պատասխանվել են ժամանակին, տրամադրվել է տարբեր բնույթի թվով -- տեղեկանք, ելք է եղել թվով – գրություն, համայնքի ղեկավաի կողմից ընդունվել է տարբեր բնույթի թվով -- որոշում, արձակվել է թվով – կարգադրություն:

2023 թվականի ընթացքում համայնքի ավագանու կողմից ընդունվել է տարբեր բնույթի թվով – որոշում:

Հարուցված թվով 62 վարչական վարույթներից 2–ը հարուցվել է՝ ավազակոպճային խառնուրդի ապօրինի արդյունահանման, 11–ը՝ շինություն ինքնակամ կառուցելու, 1–ը՝ ջրային համակարգի վրա ազդող ինքնակամ աշխատանքներ կատարելու, 30–ը՝ անշարժ գույքի, հողի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի չվճարված հարկային պարտավորությունների, 3–ը՝ հողամասը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու, 3–ը՝ ոչ սահմանված վայրում առանց թույլտվության բացօթյա առևտուր կատարելու, 3–ը՝ առանց թույլտվության ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառք կատարելու, 1–ը՝ չսահմանված և չնախատեսված տեղերում 1–ից ավելի մ^3 ծավալով շինարարական աղբ թափելու, 2–ը՝ հանրապետական և մարզային ճանապարհները վնասելու, 1–ը՝ առևտրի օբյեկտներից դուրս սգո ծիսակատարություններին վերաբերող ապրանքների նմուշները ցուցադրելու, 1–ը՝ առանց թույլտվության բարձրավոլտ էլեկտրասնուցման գծի և էլեկտրաենթակայանի շինարարական աշխատանքներ իրականացնելու, 2–ը՝ առանց թույլտվության արտաքին գովազդ տեղադրելու և 2–ը՝ առանց թույլտվության հեղուկ վառելիքի վաճառք իրականացնելու դեպքերով:
Հարուցված թվով 62 վարչական վարույթներից 14–ով նյութերն ուղարկվել են հարկադիր կատարումն ապահովող ծառայություն:

Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բնագավառում

Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բնագավառում բնակիչների իրազեկ լինելու նպատակով պատշաճ կերպով համայնքի ղեկավարի գործունեության վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը ներկայացվել է Մեծամորի համայնքապետարանի համայնքների կառավարման տեղեկատվական համակարգի (mecamorcity.am) և ֆեյսբուքյան էջերումհամայնքի բնակիչները մասնակից են եղել զարգացման ծրագրերի, բնապահպանական կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների, տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայություններիոլորտներում անցկացված հանրային քննարկումներին, որոնց վերաբերյալ ընդունելի են եղել բնակիչների առաջարկություններն ու նախաձեռնությունները:

2023 թվականի կազմվել և ավագանու հաստատմանն է ներկայացվել համայնքի տարեկան աշխատանքային պլանը:

Ֆինանսնարեի բնագավառում

Մեծամոր համայնքի 2023 թվականի բյուջեի փաստացի եկամուտները կազմել են 4092630,2 հազար դրամ, պլանավորված 3984478,1 հազար դրամի դիմաց, կամ եկամուտների պլանը կատարվել 102,7 %-ով., որից սեփական եկամուտների փաստացի հավաքագրումը կազմել է 1037744,9 հազար դրամ, պլանավորված 942944,8 հազար դրամի դիմաց, կամ սեփական եկամուտների պլանը կատարվել է 110,1 %-ով:

Եկամուտների անվանումը			
	պլան	փաստացի	կատ. %
I. Ընդամենը վարչական բյուջեի եկամուտներ	3292473,8	3387696,3	102,9
որից՝ սեփական եկամուտներ	942944,8	1037744,9	110,1
1.Հարկեր և տուրքեր այդ թվում	729800,0	738578,6	101,2
1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից	*291500,0*	*272730,5*	*93,6*

ա/ Գույքահարկ շենքեր, շինություններից	6000,0	7068,2	117,8
բ/ Հողի հարկ	25000,0	85519,5	335,4
գ / Անշարժ գույքի հարկ	260000,0	180142,8	69,3
1.3 Գույքահարկ այլ գույքից	*420000,0*	*440179,1*	*104,8*
ա/ Գույքահարկ՝ փոխադրամիջոցներից	420000,0	440179,1	104,8
1.4 Տեղական տուրքեր	*18300,0*	*25669,0*	*140,3*
ա/ Շինարարության թույլտվություն	2500,0	5306,0	212,2
բ/ Շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման և վերականգման	150,0	0	0
գ/ Շենքերի շինությունների քանդման թույլտվություն	80,0	0	0
դ/ Առևտրի և տեխ. սպասարկման կետերում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվ.	800,0	712,0	89,0
ե/ Ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի թույլտվություն	9120,0	8983,6	98,5
զ/ Գյուղ մթերքների բացօթյա վաճառք	500,0	1464,0	292,8
է/ Վառելիքաքսայուղերի բացօթյա վաճառքի թույլտվություն	2900,0	5109,7	176,2
ը/ Համայնքի տարածքում արտաքին գովազդի թույլտվություն	850,0	2345,5	275,9
թ/Քաղաքացիական հոգեհանգստի ծիսակատարության ծառայության թույլտվություն	500,0	546,0	109,2
ժ/ Հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի կազմակերպման օբյեկտներ	150,0	489,3	326,2
ի/ Հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն	550,0	313,0	56,9
լ/ Ֆիրմային անվանումների օգտագործման թույլտվություն	200,0	400,0	200,0
2. Պաշտոնական դրամաշնորհներ	**2349529,0**	**2349951,4**	**100,0**
ա/ Դոտացիա	2344299,7	2344299,7	100,0
բ/ Սուբվենցիա	5229,3	5651,7	108,1
3 .Այլ եկամուտներ՝ **այդ թվում**	**213144,8**	**299166,4**	**140,4**
3.1 Վարձակալությունների դիմաց վճարներ	*52500,0*	*68796,5*	*131,0*
ա/ Հողի վարձակալության վճարներ	40000,0	51086,7	127,7

բ/ Տարածքի վարձակալության վճարներ	12500,0	16347,6	130,8
3.2 Մատուցված ծառայությունների դիմաց վճարներ *այդ թվում*	*25000,0*	*43383,1*	*173,5*
3.3 Տեղական վճարներ՝ *այդ թվում*	*112000,0*	*129026,5*	*115,2*
ա/ Շին ավարտի փաստագրում	0	442,0	0
բ/ Հողերը հատկացնելու հետ վերցնելու, վարձակալության տրամադրելու փաստ. կազմ.	0	4305,8	0
գ/ Աղբահանության դիմաց վճարներ	25000,0	36739,0,	147,0
դ/ Մրցույթների և աճուրդների կազմակերպումից վճար	1000,0	860,0	86,0
ե/ Մանկապարտեզների ծառայությունների դիմաց վճարներ	70000,0	68221,6	97,5
զ/ Արվեստի դպրոցի և մարզադպրոցի ծառայությունների դիմաց վճարներ	16000,0	17465,3	109,2
է/ Ջրմուղ կոյուղու ծառայություններ	0	992,8	0
3.4 Շինարարության օրինականացում	*23000,0*	22396,4	*0*
3.5 Կարչական իրավախախտումներից եկամուտներ	*0*	*17284,4*	*0*
3.6 Այլ եկամուտներ	*644,8*	*18279,4*	*2834,9*
I I Ֆոնդային բյուջե	*692004,3*	*704933,9*	*101,9*
1.Կապիտալ դրամաշնորհներ	*692004,3*	*704685,0*	*101,8*
2. Այլ եկամուտներ	*0*	*248,9*	*0*
ԸՆԴԱՄԵՆԸ	*3984478,1*	*4092630,2*	*102,7*

Տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 420427,5 հազար դրամ, որից՝

Ֆոնդային բյուջեի մնացորդ 420427,5 հազար դրամ

2. Մեծամոր համայնքի 2023 թվականի բյուջեի փաստացի ծախսը կազմել է 4179839,3 հազար դրամ, պլանավորված 4404905,6 հազար դրամի դիմաց, հետևյալ գործառական և տնտեսագիտական դասակարգմամբ.

Բովանդակություն	պլան	փաստացի
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	1195316,0	1152257,9
ա/ Օրենսդիր և գործադիր մարմին	*1153010,0*	*1113074,3*
• աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	635320,0	624680,8
• պարգևատրումներ	47455,0	47338,4
• այլ վարձատրություններ	8450,0	8450,0
• էներգետիկ ծառայություններ	65900,0	65795,0
• կոմունալ ծառայություններ	2350,0	2296,0
• կապի ծառայություններ	9000,0	7336,4
• ապահովագրական ծախսեր	990,0	682,0
• ներքին գործուղումներ	500,0	436,4
• արտասահմանյան գործուղումներ	5500,0	5452,1
• մասնագիտական ծառայություններ	400,0	385,0
• տեղեկատվական ծառայություններ	300,0	206,7
• ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	3500,0	2275,7
• հատուկ մասնագիտական ծառայություն	23500,0	23284,0
• շենքերի շինությունների ընթացիկ նորոգում	990,0	0
• մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	12000,0	9689,4
• գրասենյակային նյութեր	6000,0	4540,7
• տրանսպորտային նյութեր	42000,0	41556,8
• կենցաղային և հանրային սննդի նյութեր	4000,0	1835,3
• հատուկ նպատակային այլ նյութեր	2000,0	1743,9
• շենքերի շինությունների կապիտալ նորոգում	253705,0	236437,7
• տրասպորտային միջոցներ	25200,0	25200,0
• վարչական սարքավորումներ	3000,0	2560,0
• այլ մեքենաներ և սարքավորումներ	950,0	892,0
բ/ Ընդհանուր բնույթի ծառայություններ	*7336,0*	*7331,8*
• համակարգչային ծառայություններ	6036,0	6036,0
• տեղեկատվական ծառայություններ	1300,0	1295,8
գ/ Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	*34970,0*	*31851,8*

• գույքի վարձակալություն	1940,0	1920,0
• հատուկ մասնագիտական ծառայություն	17600,0	16626,6
• հատուկ նպատակային այլ նյութեր	7500,0	7120,2
• պարտադիր վճարներ	6000,0	4920,6
• վարչական սարքավորումներ	950,0	620,4
• այլ մեքենաներ և սարքավորումներ	980,0	644,0
2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**337239,4**	**276584,0**
ա/ Գյուղատնտեսություն	***29040,0***	***28800,0***
• աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	29040,0	28800,0
բ/ Ոռոգում	***296149,4***	***287147,6***
• շենքերի շինությունների կապիտալ նորոգում	282489,4	273487,6
• նախագծահետազոտական ծախսեր	13660,0	13660,0
գ/ **Գազիֆիկացում**	***74095,0***	***69620,5***
• շենքերի շինությունների կառուցում	22920,0	22900,8
• շենքերի շինությունների կապիտալ նորոգում	34428,0	31612,7
• նախագծահետազոտական ծախսեր	16747,0	15107,0
դ/ Ճանապարհային տրանսպորտ	***87955,0***	***65573,9***
• գույքի վարձակալություն	980,0	950,0
• ճանապարհների ընթացիկ նորոգում	700,0	682,0
• ճանապարհների կապիտալ վերանորոգում	75000,0	59426,9
• նախագծահետազոտական ծախսեր	11275,0	4515,0
• ***ե/ Տնտեսական հարաբերություններ/ այլ դասերին չպատկանող/***	***-150000,0***	***-174558,0***
• մուտքեր հողի օտարումից	-150000,0	-161376,0
• այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր	0	-13182,0
3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	**324564,2**	**304159,5**
ա/ Աղբահանություն	***240263,0***	***240254,7***
• սուբսիդիաներ	240263,0	240254,7
բ/ Շրջակա միջավայրի պաշտպանություն	***84301,2***	***63904,8***
• սուբսիդիաներ	57581,2	53416,9
• շենքերի շինությունների կապիտալ նորոգում	25480,0	9338,6
• նախագծահետազոտական ծախսեր	1240,0	1149,3

4. ԲՆԱԿ.ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ		1136181,7	1088100,0
ա/ Բնակարանային շինարարություն		***221400,5***	***216807,8***
• սուբսիդիաներ		91050,5	87720,7
• այլ կապիտալ դրամաշնորհներ		12180,0	12180,0
• շենքերի կապիտալ վերանորոգում		3370,0	3360,1
• այլ մեքենաներ և սարքավորումներ		109980,0	109620,0
• նախագծահետազոտական ծախսեր		4820,0	3927,0
բ/ Ջրամատակարարում		***698321,7***	***664120,2***
• էներգետիկ ծառայություններ		295950,0	294625,3
• սուբսիդիաներ		37000,0	30847,4
• շենքերի շինությունների կառուցում		16465,0	11340,0
• շենքերի շինությունների կապիտալ նորոգում		332951,7	312376,5
• այլ մեքենաներ և սարքավորումներ		990,0	966,0
• նախագծահետազոտական ծախսեր		14965,0	13965,0
գ/ Փողոցների լուսավորում		***216459,5***	***207172,0***
• էներգետիկ ծառայություններ		43050,0	43030,0
• սուբսիդիաներ		173409,5	164142,0
5. ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ, ԿՐՈՆ		***161210,0***	***147832,2***
ա/Հանգստի սպորտի ծառայություններ		***6000,0***	***5915,8***
• այլ կապիտալ դրամաշնորհներ		6000,0	5915,8
բ/ Գրադարան		***25875,0***	***24770,1***
• սուբսիդիաներ		25875,0	24770,1
գ/ Մշակույթի տուն		***123035,0***	***113602,0***
• էներգետիկ ծառայություններ		15620,0	15580,7
• սուբսիդիաներ		63275,0	58965,8
• շենքերի շինությունների կառուցում		330,0	330,0
• շենքերի կապիտալ վերանորոգում		28890,0	27441,5
• նախագծահետազոտական ծախսեր		14920,0	11284,0
դ/ Այլ մշակութային կազմակերպություններ		***6300,0***	***3544,3***
• ընդհանուր բնույթի այլ ծառայություններ		3000,0	2629,0

• կենցաղային և հանրային սննդի նյութեր	2000,0	709,1
• հատուկ նպատակային այլ նյութեր	1300,0	206,2
6. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	1236562,9	1197616,7
6.1 Նախադպրոցական դաստիարակություն	*1074028,8*	*1035236,0*
• Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում	1322,2	1322,1
• սուբսիդիաներ	508260,4	475957,6
• շենքերի շինությունների կառուցում	1098,0	1097,4
• շենքերի կապիտալ վերանորոգում	548160,2	541768,9
• նախագծահետազոտական ծախսեր	15188,0	15090,0
6.2 Հանրակրթական ուսուցում	*5150,0*	*5042,2*
• ընթացիկ դրամաշնորհ	5150,0	5042,2
6.3 Արտադպրոցական դաստիարակություն	*157384,1*	*157338,5*
• սուբսիդիաներ	144500,0	144459,2
• ընթացիկ դրամաշնորհ	5874,1	5874,1
• շենքերի շինությունների կառուցում	1020,0	1015,2
• նախագծահետազոտական ծախսեր	5990,0	5990,0
7. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	13830,0	13289,0
• այլ նպաստներ բյուջեից	11430,0	11195,0
• նվիրատվություններ	2400,0	2094,0
8. ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴ	1,4	0
պահուստային միջոցներ	1,4	0
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	4404905,6	4179839,3

Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման բնագավառում

2023 թվականի ընթացքում Մեծամոր համայնքի քաղաքացիական պաշտպանության ոլորտում կազմվել են Քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ և Քաղաքացիական պաշտպանության ծառայություններ:

2023 թվականի նոյեմբեր ամսին Մեծամոր համայնքի Փշատավան և Երասխահուն բնակավայրերում անցկացվել է Ախուրյանի ջրամբարի պատվարի փլուզման սպառնալիքի հետ կապված ուսումնագործնական վարժանք, որի շրջանակում տարհանվել է

Փշատավանի դպրոցի անձնակազմը: Քաղաքացիական պաշտպանության բնագավառում ուսումնական վարժանքները կրում են շարունակական բնույթ:

Կրթության մշակույթի սպորտի եվ երիտասարդության հարցերի բնագավառում

Մեծամոր համայնքի ենթակայությամբ կան 19 նախադպրոցական ուսումնական հաստատություններ, որոնցից 2-ը գտնվում են հիմնանորոգման մեջ (Մեծամոր քաղաքի թիվ 2, 3 մսուր-մանկապարտեզներ): 17 գործող մանկապարտեզները գտնվում են Ալաշկերտ, Ակնալիճ, Այգեշատ, Արազափ, Արգավանդ, Արմավիր, Բամբակաշատ, Եղեգնուտ, Մարգարա, Մեծամոր, Զարթոնք, Մրգաշատ, Նալբանդյան, Նոր Արմավիր, Նոր Արտագերս, Նորապատ, Ջանֆիդա բնակավայրերում: Համայնքն ունի 4 գործող արվեստի և երաժշտական դպրոցներ՝ Մեծամոր, Արմավիր, Արևիկ, Նալբանդյան բնակավայրերում, ինչպես նաև մարզադպրոց, «Մշակույթի տուն և գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ Մեծամոր քաղաքում:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի ընթացքում Մեծամոր համայնքում կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի ոլորտում իրականացվել են.

- շրջայցեր, ստուգայցեր, ինչպես նաև միջոցառումների մասնակցություն համայնքային ենթակայության նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատություններում, ինչպես նաև դպրոցներում:

- 2023 թվականին Մեծամոր համայնքի ավագանու որոշմամբ սահմանվել են համայնքային ենթակայության նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների վարձավճարների զեղչերի արտոնությունների չափանիշները.
  - ✓ նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող 337 սան օգտվել է վարձավճարի զեղչման արտոնությունից, որից՝
    237 սան՝ 100% զեղչ
    100 սան՝ 50% զեղչ

- ✓ արտադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող 314 երեխա օգտվել է վարձավճարի զեղչման արտոնությունից, որից՝
  178 երեխա՝ 100% զեղչ
  136 երեխա՝ 50% զեղչ

- 2023 թվականին 44-օրյա պատերազմի հետևանքով Լեռնային Ղարաբաղից տեղահանված և Մեծամոր քաղաքում բնակություն հաստատած արցախցի 6 երեխաների համար ավագանու կողմից սահմանվել է վարձավճարի զրոյական դրույքաչափի արտոնություն:
- 2023 թվականի հոկտեմբերից ավագանու որոշմամբ սահմանվել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և Մեծամոր համայնքում հանգրվանած նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող երեխաների համար վարձավճարի զրոյական դրույքաչափի արտոնություն:

- Տարվա ընթացքում կազմակերպվել և անցկացվել են համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթները (Մեծամորի թիվ 1, 2, 3 մսուր-մանկապարտեզներ, Արազափ և Եղեգնուտ բնակավայրերի մակապարտեզներ):
- 2023 թվականին Մեծամոր համայնքում գործող նախադպրոցական ուսումնական հաստատություններում անցկացվել են մանկավարժական աշխատողների թափուր պաշտոնները զբաղեցնելու մրցույթները (Մեծամոր, Ակնալիճ, Ջանֆիդա, Մրգաշատ, Բամբակաշատ, Նալբանդյան բնակավայրերի մանկապարտեզներ):
- 2023 թվականի մայիսի 28-ին տեղի է ունեցել Զարթոնք բնակավայրի նորակառույց մանկապարտեզի բացման արարողությունը:
- Համայնքապետարանի կողմից ԱԲԱԿ մենթալ թվաբանության ակադեմիայի Արմավիրի մարզի մասնաճյուղի Մեծամոր համայնքի սաները խրախուսվել են շնորհակալագրերով:
- Մեծամորի համայնքապետարանը Նորապատ և Մրգաշատ բնակավայրերի 65 ուսանողների համար տրամադրել է տրանսպորտային միջոց:

ՄՇԱԿՈՒՅԹ

- Ապրիլին կազմակերպվել և անցկացվել է Քաղաքացու օրվան նվիրված միջոցառումը (մաս 1-հանդիպում Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախմբի տնօրեն Դավիթ Թերզյանի հետ, մաս 2- գեղարվեստական ծրագիր՝ Արմավիր գյուղի արվեստի դպրոցի ժողգործիքների համույթի, «Երկիր Նաիրի» պարային համույթի, Շ.Ազնավուրի արվեստի դպրոցի սաների մասնակցությամբ):

- Ֆրանկոֆոնիայի օրերը Հայաստանում միջոցառման ծրագրի շրջանակներում Շ. Ազնավուրի անվան արվեստի դպրոցում կազմակերպվել և անցկացվել է «Ֆրանկոֆոն Հայաստան» համերգային ծրագիրը:
- Մեծամորի Մշակույթի տանը կազմակերպվել է «Մշակութային Մեծամոր» խորագրով բազմաոճ պարերի փառատոնը:
- 2023 թվականի հունիսի 1-ին Մեծամոր քաղաքի մշակույթի տան հարակից բակում Երեխաների պաշտպանության միջազգային օրվան ընդառաջ կազմակերպվել և անցկացվել է ցուցահանդես-վաճառք, ինչպես նաև համերգային ծրագիր:
- 2023 թվականի սեպտեմբերի 9-ին Մեծամոր համայնքը մասնակցել է «Մշակութային վերածնունդ. արվեստների և արհեստների փառատոն» միջոցառմանը:

ՍՊՈՐՏ

- Տարվա ընթացքում սպորտի բնագավառում հաջողություններ ձեռք բերած մարզիկները խրախուսվել են շնորհակալագրերով:
- 2023 թվականի մարտին Մեծամոր քաղաքի Սաշա Գալստյանի անվան N2 ավագ դպրոցում կազմակերպվել և անցկացվել է «ՀՀ վարչապետի գավաթ» սիրողական թենիսի մրցաշարը:
- Հուլիսին Մեծամորի համայքապետարանի աշխատակազմի թիմը մասնակցել է Մարզային ֆուտզալի առաջնությանը:
- Համահայկական VIII ամառային խաղերի անցկացման համար Մեծամորի համայնքապետարանը իրականացրել է կազմակերպչական աշխատանքներ՝ ձեռք են բերվել սպորտային համազգեստ, մարզագույք և այլն:
- Օգոստոսի 8-ին Գյումրի քաղաքում կայացավ Համահայկական VIII ամառային խաղերի բացման արարողությունը, որին մասնակցեց Մեծամոր համայնքի պատվիրակությունը:

  Համահայկական խաղերի վոլեյբոլի մրցաշարում Մեծամորի թիմը զբաղեցրեց 3-րդ պատվավոր տեղը:

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

Մեծամորը՝ Հայաստանի Հանրապետության 2023 թվականի երիտասարդական մայրաքաղաք ճանաչվելու առթիվ տեղի են ունեցել հանդիպումներ համահայտատու կազմակերպությունների և նախարարության համապատասխան վարչության ներկայացուցիչների հետ:

Կազմակերպվել և անցկացվել են մի շարք միջոցառումներ.

- ✓ *մայիսի 19-ին Մեծամորի Մշակույթի տանը կայացավ «Հայաստանի Հանրապետության 2023 երիտասարդական մայրաքաղաք» միջոցառման պաշտոնական բացման արարողությունը:*
- ✓ օգոստոսի 12-ին Մեծամոր քաղաքում Երիտասարդության միջազգային օրվա կապակցությամբ անցկացվեց «Կանաչ հմտություններ երիտասարդների համար» խորագիրը կրող միջոցառումների շարքը:
- ✓ 2023 թվականի նոյեմբերի 10-16-ը կայացավ «Մասնագիտական կողմնորոշում» արշավ միջոցառումը՝ Ալաշկերտ, Նորապատ, Այգեշատ, Արգավանդ բնակավայրերի դպրոցներում:
- ✓ Նոյեմբերի 24-ին Արմավիր գյուղի միջնակարգ դպրոցում կազմակերպվեց, անցկացվեց հրաձգության մրցաշար՝ համայնքի դպրոցների 15-17 տարեկան աշակերտների մասնակցությամբ:
- ✓ Նոյեմբերի 30-ին Մեծամոր քաղաքի Ս. Գալստյանի անվան թիվ 2 ավագ դպրոցում անցկացվեց գիտակոնֆերանս «Բաց լաբորատորիաներ և Գիտության օրեր» միջոցառումը:
- ✓ Դեկտեմբերի 5-ին Մեծամոր քաղաքի Ս. Գալստյանի անվան թիվ 2 ավագ դպրոցում կայացավ «Մեծամորը ՀՀ 2023 երիտասարդական մայրաքաղաք» ծրագրի փակման միջոցառման արարողությունը:

Տարվա ընթացքում մասնակցություն է եղել նաև այլ կազմակերպությունների միջոցառումներին և ծրագրերին.

- ✓ Համայնքային սոցիալական ծրագրի իրականացման շրջանակներում՝ Մեծամոր համայնքի «Ընտանիք և համայնք» բարեգործական և «Հույսի Մեծամոր» ՀԿ-ների հետ համագործակցությամբ եղել է մասնակցություն սոցիալ-հոգեբանական աջակցության «Հաշմանդամություն ունեցող երեխաների ցերեկային խնամք» դրամաշնորհային ծրագր իրականացման մշտադիտարկման աշխատանքներին:
- ✓ Մասնակցություն «Հույսի Մեծամոր» ՀԿ-ի նախաձեռնած «Երեխայի իրավունքները» թեմայով Մեծամորի թիվ 1 մսուր մանկապարտեզի ծնողական համայնքի հետ հանդիպում-քննարկմանը:

Պաշտպանության կազմակերպման բնագավառում

2023 թվականի ընթացքում հավաքագրվել է Մեծամոր համայնքում 2008 թվականին ծնված պատանիների ցուցակները և ուղարկվել ՀՀ ՊՆ Զ և ԶՀԾ Արմավիրի մարզային ստորաբաժանում: Պահեստազորում ընդգրկված և համայնքում հաշվառված քաղաքացիներին է տրամադրվել վարժական հավաքներին մասնակցելու ծանուցագրերը:

Ապահովվել է ամառային և ձմեռային զորակոչին ենթակա, համայքում հաշնառված և նախապես ծանուցված քաղաքացիների ներկայությունը բժշկական հետազոտությունների համար:

Համայնքապետարանը կազմակերպել է ՀՀ ՊՆ Զ և ԶՀԾ Արմավիրի մարզային ստորաբաժանման կողմից ամառային և ջմեռային զորակոչի ծանուցագրերի տրամադրում:

Կատարվել է պահեստազորում ընդգրկված և համայնքում հաշվառված քաղաքացիների ցուցակների ճշգրտման աշխատանքներ:

Ճշտվել է Մեծամոր համայնքի հաշվեկշռում գտնվող տրանսպորտային միջոցների ցուցակները, որոնք ըստ օրենքի ներգրավված են խաղաղ պայմաններում և վարժական հավաքներին:

ՀՀ ՊՆ Զ և ԶՀԾ Արմավիրի մարզային ստորաբաժանումից ստացել եմ հերթական բուժ զնման համար անվանական ծանուցագրեր և հանձնել եմ հասցեատերերին:

Վարվել է Մեծամոր քաղաքի պահեստազորի գրանցամատյանը:

Քաղաքաշինության և հողաշինության բնագավառում

2023 թվականի ընթացքում իրականացվել են գետևյալ աշխատանքները

•Հասցետրամադրելու մասին որոշումներ-1138

•օրինական տնամերձ հողամասին կից ավել զբաղեցրած հողամասի անհատույց սեփականության իրավունքով տրամադրելու մասին որոշումներ-143

•օրինական տնամերձ հողամասին կից ավել զբաղեցրած հողամասը անհատույց սեփականության իրավունքով տրամադրելու, տնամերձ հողամասին կից 20%-ից ավել զբաղեցրած հողամասը կադաստրային արժեքի 30%-ի չափով օտարման եվ հողամասերի կարգավիճակի մասին որոշումներ-11

•համայնքի վարչական տարածքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին որոշումներ-129

•ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման մասին որոշումներ-113

•հողամասի ընդլայնման և ուղղակի վաճառքի մասին որոշումներ-14

•հողամասի գործառնական նշանակությունը փոխելու մասին որոշում-42

•շենքի գործառնական նշանակությունը փոխելու մասին որոշում-8

•շինարարության թույլտվություններ-204

•նախագծման թույլտվություններ-242

•ավարտական ակտեր-59

•քանդման թույլտվություն-1

•քարտեզի ուղղման գրություններ-685

•անվան/հայրանվան/ազգանվան ուղղման գրություններ-320

•ծածկագրի ուղղման գրություններ-52

2023 թվականին իրականացվել է հետևյալ 2022 թվականի սուբվեցիոն ծրագրերը:

1. Մեծամոր համայնքի Նոր Արտագերս բնակավայրի Նոր Արտագերս-Նալբանդյան ճանապարհի հիմնանորոգում, 2022 թվական սուբվենցիոն ծրագիր, որը ավարտվել է 2023 թվականին, արժեքը՝ 94 280 000 ՀՀ դրամ,
2. Մեծամոր համայնքի Մեծամոր քաղաքի թիվ 3 մանկապարտեզի հիմնանորոգում, 2022 թվական սուբվենցիոն ծրագիր, որը ավարտվել է 2023 թվականին, արժեքը՝ 459 657 500 ՀՀ դրամ,
3. Մեծամոր համայնքի Մեծամոր քաղաքի թիվ 2 մանկապարտեզի հիմնանորոգում, 2022 թվական սուբվենցիոն ծրագիր, որը ավարտվել է 2023 թվականին, արժեքը՝ 292 258 500 ՀՀ դրամ,
4. Մեծամոր համայնքի Տարոնիկ բնակավայրի մանկապարտեզի հիմնանորոգում, 2022 թվական սուբվենցիոն ծրագիր, որը ավարտվել է 2023 թվականին, արժեքը՝ 136 722 500 ՀՀ դրամ
5. Մեծամոր համայնքի Տանձուտ բնակավայրի մանկապարտեզի հիմնանորոգում, 2022 թվական սուբվենցիոն ծրագիր, որը ավարտվել է 2023 թվականին, արժեքը՝ 150 459 000 ՀՀ դրամ,
6. ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի նախկին պոլիկլինիկայի շենքը Մեծամորի համայնքապետարանի վարչական շենք դարձնելու նպատակով վերանորոգում, 2022 թվական սուբվենցիոն ծրագիր, որը ավարտվել է 2023 թվականին, արժեքը՝ 252 425 000 ՀՀ դրամ:

2023 թվականի իրականացվել է հետևյալ սուբվեցիոն ծրագրերը:

1. Թվով 9 բնակավայրում 10 խորքային հորերի վերականգնում, 2023 թվականի սուբվենցիոն ավարտված ծրագիր, արժեքը՝ 147 351 124 ՀՀ դրամ,
2. Մեծամոր համայնքի Մեծամոր քաղաքի թվով 8 բազմաբնակարան շենքերի վերելակների փոխարինում, 2023 թվականի սուբվենցիոն ավարտված ծրագիր, արժեքը՝ 74 400 000 ՀՀ դրամ,

3. Վարդանաշեն բնակավայրի խմելու ջրամատակարարման ցանցի կառուցում, 2023 թվականի սուբվենցիոն ավարտված ծրագիր, արժեքը՝ 30 639 800 ՀՀ դրամ,
4. Հայկավան բնակավայրի խմելու ջրամատակարարման ցանցի կառուցում, 2023 թվականի սուբվենցիոն ավարտված ծրագիր, արժեքը՝ 131 827 594 ՀՀ դրամ,
5. Նոր Արտագերս բնակավայրի խմելու ջրամատակարարման ցանցի կառուցում, 2023 թվականի սուբվենցիոն ավարտված ծրագիր, արժեքը՝ 79 430 000 ՀՀ դրամ,
6. Նոր Կեսարիա բնակավայրի խմելու ջրամատակարարման ցանցի կառուցում, 2023 թվականի սուբվենցիոն ավարտված ծրագիր, արժեքը՝ 6 007 000 ՀՀ դրամ,
7. Շենավան բնակավայրի խմելու ջրամատակարարման ցանցի կառուցում, 2023 թվականի սուբվենցիոն ավարտված ծրագիր, արժեքը՝ 12 054 600 ՀՀ դրամ,
8. Ամասիա բնակավայրի խմելու ջրամատակարարման ցանցի կառուցում, 2023 թվականին սկսված սուբվենցիոն ծրագիր 2024 թվականին շարունակվող, արժեքը՝ 22 804 548 ՀՀ դրամ,
9. Գետաշեն բնակավայրի խմելու ջրամատակարարման ցանցի կառուցում, 2023 թվականին սկսված սուբվենցիոն ծրագիր 2024 թվականին շարունակվող, արժեքը՝ 115 106 000 ՀՀ դրամ,
10. Նալբանդյան բնակավայրի խմելու ջրամատակարարման ցանցի կառուցում, 2023 թվականին սկսված սուբվենցիոն ծրագիր 2024 թվականին շարունակվող, արժեքը՝ 259 921 010 ՀՀ դրամ,
11. Արգավանդ բնակավայրի խմելու ջրամատակարարման ցանցի կառուցում, 2023 թվականին սկսված սուբվենցիոն ծրագիր 2024 թվականին շարունակվող, արժեքը՝ 116 670 000 ՀՀ դրամ:

2023 թվականին իրականացվել է նաև Բնապահպանական ծրագիր, որը ֆինասական միջոցները հատկացվել է պետական բյուջեից համաձայն «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ի թիվս այլ ընկերությունների ՀԱԷԿ ևս նեռավված այդ ցանկում և բնապահպանական հարկերից Մեծամոր համայնքին կատարում է մասհանումներ: Ծրագիրը շին. աշխատանքներ սկսվել է 2023 թվականի սեպտեմբերի 20-ին և ավարտվել է դեկտեմբերի 25-ին, արժեքը՝ 26 312 200 ՀՀ դրամ:

Կոմունալ տնտեսության բնագավառում

ՀՀ Արմավիրի մարզի մեծամոր համայնքի թվով 15 բնակավայրերում իրականացվել է նոր 28 ցուցանակների տեղադրում, ինչպես նաև կատարվել է բնակավայրերի վարչական շենքերի ցուցանակների փոխարինման աշխատանքներ:

Համայնքի կարիքների համար ձեռք են բերվել՝ սանիտարական վակուումային մեքենա 1 հատ КО-529-16 շասի МАЗ-5340С2-585-013,աղբատար մեքենա 1 հատ КО-456-10 շասի МАЗ-438121-540-001,աղբաման 660լ տարողությամբ -150 հատ, էքսկավատոր բեռնիչ 2 հատ-CASE 570 SV, գրեյդեր 1հատ SHANTUI SG17-B6, ինքնաթափ բեռնատար 2 հատ - HOWO ZZ3327S3847E , մասնագիտացված ջրցան KAMAZ КО-806 /KAMAZ-43253/:

ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքում աղբահանությունը և սանիտարական մաքրությունն իրականացվում է 24/7 ռեժիմով: Աղբահանությունը և սանիտարական մաքրումն իրականացվում է «Մաքրություն» ՍՊԸ-ի կողմից:

Համայնքի 27 բնակավայրերում խմելու ջրի որակի վերահսկողության պատշաճ կարգավորման համար՝ ամեն ամիս իրականացվել է լաբորատոր փորձաքննություն «ՀՎԿԱԿ Արմավիրի մասնաճյուղ» ՊՈԱԿ-ի կողմից:

Համայնքում թափառող կենդանիների կողմից վարաքակիր հիվանդությունների կանխարգելման նպատակով թվով 66 շուն ենթարկվել է ստերիլիզացման և ստերջացման:

ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի բարձրահարկ շենքերի թվով 13 վերելակ փոխարինվել է նորով, ինչպես նաև իրականացվել է տվյալ շենքերի հարթ տանիքների վերանորոգում:

«Մեծամոր համայնքի լուսավորություն և կանաչապատում» ՀՈԱԿ

«Մեծամոր համայնքի լուսավորություն և կանաչապատում» ՀՈԱԿ-ը իրականացրել է հետևյալ աշխատանքները՝

Մեծամոր քաղաքում իրականացվել են ծառաէտման, ծառաներկման և սրսկման, խոտհնձման աշխատանքներ:

Մեծամոր համայնքի 30 բնկավայրերում իրականացվել են ծառաէտման և խոտհնձման աշխատանքներ:

Մեծամաոր համայմքի Մեծամոր քաղաքում և Մարգարա, Երասխահուն, Նորապատ, Նալբանդյան, Ակնահեռ, Տարոնիկ, Արտաշար, Նոր Արմավիր, Փշատավան, Գետաշեն, Բաբակաշատ, Մրգաշատ բնակավայրերում փոխարինվել են նորով ընդհանուր թվով 18 հատ ջրի պոմպեր:

Մեծամոր քաղաքում, Ալաշկերտ, Նոր Արտագես, Տանձուտ, Մեծամոր, Զարթոնք, Նոր Արմավիր, Արգավանդ, Հայկավան,Արմավիր, Այգեշատ, Արտաշար, Արազափ, Տարոնիկ, Շենավան, Երասխահուն, Բամբակաշատ, Ամասիա,Նորապատ, Վարդանաշեն, Գետաշեն, Ջրաշեն, Մրգաշատ, Եղեգնուտ, Ակնալիճ, Ջանֆիդա, Փշատավան, Նոր Կեսարիա, Մարգարա, Արևիկ բնակավայրերում տեղադրվել են ընդհանուր թվով 3701 հատ ԼԵԴ սյան լուսատու 50w 5000K:

Մեծամոր քաղաքում, Ալաշկերտ, Նոր Արտագես, Տանձուտ, Մեծամոր, Զարթոնք, Նոր Արմավիր, Արգավանդ, Հայկավան,Արմավիր, Այգեշատ, Արտաշար, Արազափ, Տարոնիկ, Շենավան, Երասխահուն, Բամբակաշատ, Ամասիա,Նորապատ, Վարդանաշեն, Գետաշեն, Ջրաշեն, Մրգաշատ, Եղեգնուտ, Ակնալիճ, Ջանֆիդա, Փշատավան, Նոր Կեսարիա, Մարգարա, Արևիկ բնակավայրերում փոխարինվել են նորով ընդհանուր թվով 14842 մետր Ալյումինե մալուխ, ԱԱՎԳ 2*12մմ^2:

Մեծամոր քաղաքում, Ալաշկերտ, Նոր Արտագես, Տանձուտ, Մեծամոր, Զարթոնք, Նոր Արմավիր, Արգավանդ, Հայկավան,Արմավիր, Այգեշատ, Արտաշար, Արազափ, Տարոնիկ, Շենավան, Երասխահուն, Բամբակաշատ, Ամասիա,Նորապատ, Վարդանաշեն, Գետաշեն, Ջրաշեն, Մրգաշատ, Եղեգնուտ, Ակնալիճ, Ջանֆիդա, Փշատավան, Նոր Կեսարիա, Մարգարա, Արևիկ բնակավայրերում փոխարինվել են նորով ընդհանուր թվով 50280 մետր Էլեկտրական լար, ԱՊՎ, 1*16մմ^2:

Մեծամոր քաղաքում, Ալաշկերտ, Նոր Արտագես, Տանձուտ, Մեծամոր, Զարթոնք, Նոր Արմավիր, Արգավանդ, Հայկավան,Արմավիր, Այգեշատ, Արտաշար, Արազափ, Տարոնիկ, Շենավան, Երասխահուն, Բամբակաշատ, Ամասիա,Նորապատ, Վարդանաշեն, Գետաշեն, Ջրաշեն, Մրգաշատ, Եղեգնուտ, Ակնալիճ, Ջանֆիդա, Փշատավան, Նոր Կեսարիա, Մարգարա, Արևիկ բնակավայրերում փոխարինվել են նորով ընդհանուր թվով 1210 մետր Էլեկտրական լար, ՊՊՎԳ, 2*2.5մմ^2:

Մեծամոր քաղաքում, Ալաշկերտ, Նոր Արտագես, Տանձուտ, Մեծամոր, Զարթոնք, Նոր Արմավիր, Արգավանդ, Հայկավան,Արմավիր, Այգեշատ, Արտաշար, Արազափ, Տարոնիկ, Շենավան, Երասխահուն, Բամբակաշատ, Ամասիա,Նորապատ, Վարդանաշեն, Գետաշեն, Ջրաշեն, Մրգաշատ, Եղեգնուտ, Ակնալիճ, Ջանֆիդա, Փշատավան, Նոր Կեսարիա, Մարգարա, Արևիկ բնակավայրերում փոխարինվել են նորով ընդհանուր թվով 5000 մետր Ալյումինե մալուխ, ԱՎՎԳ 2*4մմ^2:

Մեծամոր քաղաքում, Ալաշկերտ, Նոր Արտագես, Տանձուտ, Մեծամոր, Զարթոնք, Նոր Արմավիր, Արգավանդ, Հայկավան,Արմավիր, Այգեշատ, Արտաշար, Արազափ, Տարոնիկ, Շենավան, Երասխահուն, Բամբակաշատ, Ամասիա,Նորապատ, Վարդանաշեն, Գետաշեն, Ջրաշեն, Մրգաշատ, Եղեգնուտ, Ակնալիճ, Ջանֆիդա, Փշատավան, Նոր Կեսարիա, Մարգարա, Արևիկ բնակավայրերում փոխարինվել են նորով ընդհանուր թվով 490 մետր Էլեկտրական լար՝ պղնձյա 2*1.5մմ^2 ՊՊՎԳ:

Մեծամոր քաղաքում, Ալաշկերտ, Նոր Արտագես, Տանձուտ, Մեծամոր, Զարթոնք, Նոր Արմավիր, Արգավանդ, Հայկավան,Արմավիր, Այգեշատ, Արտաշար, Արազափ,

Տարոնիկ, Շենավան, Երասխահուն, Բամբակաշատ, Ամասիա,Նորապատ, Վարդանաշեն, Գետաշեն, Ջրաշեն, Մրգաշատ, Եղեգնուտ, Ակնալիճ, Ջանֆիդա, Փշատավան, Նոր Կեսարիա, Մարգարա, Արևիկ բնակավայրերում փոխարինվել են նորով ընդհանուր թվով 239 մետր էլեկտրական լար՝ պղնձյա 2*4 մմ² ՊՊՎԳ:

Մեծամոր քաղաքում, Ալաշկերտ, Նոր Արտագես, Տանձուտ, Մեծամոր, Զարթոնք, Նոր Արմավիր, Արգավանդ, Հայկավան,Արմավիր, Այգեշատ, Արտաշար, Արազափ, Տարոնիկ, Շենավան, Երասխահուն, Բամբակաշատ, Ամասիա,Նորապատ, Վարդանաշեն, Գետաշեն, Ջրաշեն, Մրգաշատ, Եղեգնուտ, Ակնալիճ, Ջանֆիդա, Փշատավան, Նոր Կեսարիա, Մարգարա, Արևիկ բնակավայրերում փոխարինվել են նորով ընդհանուր թվով 8283 մետր Ալյումինե մալուխ, ԱՎՎԳ 2*16մմ²:

« Մեծամորի Բարեկարգում» ՀՈԱԿ

Մեծամոր համայնքի, Մեծամոր քաղաքի « Մեծամորի Բարեկարգում» ՀՈԱԿ-ի շենքի դռների ճաղավանդակների վերանորոգման և ներկման աշխատանքներ, համայնքապետարանի ինչպես նաև այգու փայտե ցանկապատի վերանորոգման աշխատանքներ, վերելակների սենյակների լուսավորության և պատուհանների վերանորոգման աշխատանքներ:

Մեծամոր համայնքի Վարդանաշեն, Նոր Արտագերս, Արևիկ, Ալաշկերտ, Ջրաշեն, Բամբակաշատ, Նալբանդյան, Ամասիա, Տանձուտ բնակավայրերի բուժամբուլատորիաների խմելու ջրագծերի վերանորոգման աշխատանքներ:

Մեծամոր համայնքի Հայկավան , Ջրաշեն,Բամբակաշատ, Նալբանդյան, Ալաշկերտ, Արազափ, Արգավանդ, Եղեգնուտ, Փշատավան, Գետաշեն բնակավայրերի խմելու ջրագծերի մասնակի վերանորոգման աշխատանքներ:

Մեծամոր համայնքի «Մշակույթի տուն և գրադարան» ՀՈԱԿ-ի հարակից տարածքի, «Մեծամորի Բարեկարգում» ՀՈԱԿ-ի շենքի դիմացի զբոսայգու վերանորոգման աշխատանքեր բարեկարգման աշխատանքներ, Արցախյան զոհերի հուշարձանի, 1 թղմ. 28 շենքի դիմացի, սուրբ Ղազար եկեղեցու դիմացի այգու ոռոգման ջրագծերի վերանորոգման աշխատանքներ:

Մեծամոր համայնքի 1 թղմ. 23 շենքի 1-ին մուտքի աստիճանների և խողովակների վերանորգման աշխատանքներ:

Մեծամոր համայնքի, Արմավիր բնակավայրի մանկապարտեզի խմելաջրի ջրագծերի և շենքի ներսի հարդարման աշխատանքներ:

Մեծամոր համայնքի, Արգավանդ բնակավայրի զբոսայգու նստարանների ներկման աշխատանքներ:

Մեծամոր համայնքի, Մեծամոր քաղաքի զբոսայգու եզրաքարերի տեղադրման աշխատանքներ:

Մեծամոր համայնքի, Մեծամոր քաղաքի 14 շենքի դիմացի խորքահորի երկաթյա խողովակի ապամոնտաժման և փոխարինման աշխատանքներ: Մեծամոր համայնքի, Մեծամոր քաղաքի 1թղմ. 2 շենքի կոյուղու վերանորոգման աշխատանքներ

Մեծամոր համայնքի, Մեծամոր քաղաքի 2-րդ թղմ. 4-րդ շենքի տանիքի մասնակի վերանորոգման աշխատանքներ:

Մեծամոր համայնքի, Մեծամոր քաղաքի գծանշանների ներկման աշխատանքներ:
Մեծամոր համայնքի, Մեծամոր քաղաքի 1-ին թղմ. 27 շենքի 1-ին մուտքի կոյուղու խողովակների վերանորոգման աշխատանքներ: Մեծամոր համայնքի, Արևիկ բնակավայրի խմելու ջրագծի վերանորոգման աշխատանքներ.

Մեծամոր համայնքի, Մեծամոր քաղաքի 1 թղմ. 13-րդ և 7-րդ շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքներ:
Մեծամոր համայնքի, Նալբանդյան բնակավայրի ջրագծերի վերանորոգման աշխատանքներ: Մեծամոր համայնքի, Ջրաշեն բնակավայրի ջրագծերի վերանորոգման աշխատանքներ:

Մեծամոր համայնքի, Ամասիա բնակավայրի ջրատար տարայի զոդման աշխատանքներ:
Մեծամոր համայնքի, Ամասիա բնակավայրի ջրատար տարայի զոդման աշխատանքներ:

Մեծամոր համայնքի, Երասխահուն բնակավայրի խորքային հորի պոմպի (նասոս)

տեղադրման աշխատանքներ: Մեծամոր համայնքի, Մեծամոր քաղաքի 1 թղմ 16, 9 և 18 շենքերի ճաղավանդակների զոդման աշխատանքներ: Մեծամոր համայնքի, Արազափ բնակավայրի խմելու ջրի ջրաչափերի տեղադրման աշխատանքներ

Մեծամոր համայնքի, Մեծամոր քաղաքի 1թղմ. 1-ին շենքի 3-րդ մուտքի դռան տեղադրման աշխատանքներ:

Մեծամոր համայնքի, Նոր Արմավիր բնակավայրի մանկապարտեզի խմելաջրի ջրագծի պոմպի տեղադրման աշխատանքներ.

Մեծամոր համայնքի, Ջրաշեն բնակավայրի ոռոգման ջրի անցկացման աշխատանքներ:

Մեծամոր համայնքի, Փշատավան բուժամբուլատորիայի սալիկապատման աշխատանքներ

Մեծամոր համայնքի, Տանձուտ բնակավայրի 9-րդ փողոցի կոյուղու դիտահորերի

վերանորոգման աշխատանքներ

Մեծամոր համայնքի, Փշատավան բնակավայրի խմելաջրի ամբարման տարայի զոդման աշխատանքներ
Մեծամոր համայնքի, Արևիկ և Արտաշար բնակավայրերի խմելաջրի ամբարման տարաների և խողովակների զոդման աշխատանքներ

Առևտրի և ծառայությունների բնագավառում

2023 թվականի ընթացքում համայնքի տարածքում տրամադրվել է ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի 441, հանրային սննդի կազմակերպման և իրացման 26, արտաքին գովազդի տեղադրման 95, հեղուկ վառելիքի 28, մանրածախ առևտրի կետերում տեխնիկական հեղուկների 38, հեղուկացված գազերի 30, շինարարական աշխատանքների իրականացման 190, ֆիրմային անվանման 5 թույլտվություններ:

Առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում իրականացվել է հսկողություն, որի արդյունքներն են.

- Հաշվետու ժամանակաշրջանում գործող օբյեկտների քանակը

Առևտուր-254

Հանրային սնունդ- 19

Կենցաղային ծառայություն- 42

- Տարվա ընթացքում հսկողություն իրականացված օբյեկտների քանակը

Առևտուր- 177

Հանրային սնունդ- 19

Կենցաղային ծառայություն – 42

Արձանագրված խախտումներ չկան:

Սոցիալական աջակցության և առողջապահության բնագավառում

ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանը սոցիալական և առողջապահության ոլորտներում իրականացվող աշխատանքների ընթացքում համագործակցել է ՀՀ Արմավիրի մարզպետարանի, Արմավիրի տարածքային միասնական սոցիալական ծառայության (ՄՍԾ) և այլ պետական կառույցների հետ:

Հաշվետու ժամանակահատվածում Մեծամոր համայնքի բնակիչներից ստացված սոցիալական օգնության դիմումների պատշաճ ուսումնասիրման, պահանջվող փաստաթղթերի հավաքագրման, ինչպես նաև տնային այցելությունների արդյունքում ընտանիքի կարիքների գնահատման համար հիմք են հանդիսացել Մեծամոր համայնքի ավագանու 2022թ. փետրվարի 2-ի «Մեծամոր համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը

սահմանելու մասին» N7 և «Մեծամոր համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին» N11 որոշումները: Իսկ դիմումների ուսումնասիրության արդյունքների համակողմանի և անաչառ քննարկումներն ապահովելու, համապատասխան եզրակացության արդյունքում որոշում կայացնելու համար Մեծամոր համայնքի ղեկավարի 2022թ. ապրիլի 4-ի թիվ 093 կարգադրությամբ ստեղծվել է սոցիալական աջակցության հանձնաժողով:

2023թ. հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում մուտքագրվել է 338 դիմում, որոնք պատշաճ ուսումնասիրվել են: Կայացել է սոցիալական աջակցության հանձնաժողովի 20 նիստ և դրամական աջակցություն տրամադրելու մասին թվով 30 որոշում: Եղել են նաև արտակարգ կամ չնախատեսված իրավիճակների առաջացմամբ պայմանավորված դիմումներ, որոնց քննարկումներն իրականացվել են արագացված ընթացակարգով և դրամական աջակցություն ցուցաբերելու մասին համայնքի ղեկավարի կայացրած որոշման համար հիմք է հանդիսացել գործը վարող մասնագետի հատուկ եզրակացությունը և հանձնաժողովի նախագահի ներակայացրած գրությունը: Ստացված 338 դիմումից 60-ը չի բավարարվել՝ սահմանված չափորոշիչներին չհամապատասխանելու պատճառով հանձնաժողովի բացասական եզրակացության հիմքով, իսկ 278 դիմում բավարարվել է և դրամական աջակցություն տրամադրելու մասին համայնքի ղեկավարի ընդունած որոշումներով հատկացված գումարի ընդհանուր չափը կազմել է 11.415.000 (տասնմեկ միլիոն չորս հարյուր տասնհինգ հազար) ՀՀ դրամ:

Մեծամոր համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 28-ի N94 որոշմամբ հաստատվել է խնամակալության և հոգաբարձության մարմնի կանոնադրությունը և խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի (ԽՀՀ) անհատական կազմը՝ բաղկացած ինը անդամից: Ձևավորումից ի վեր, հանձնաժողովը պատշաճ ուսումնասիրել է քաղաքացիներից ստացված բոլոր դիմումները, ըստ անհրաժեշտության կատարել տնային այցելություններ՝ կազմելով ընտանիքի կենսապայմանների հետազոտման ակտ:

2023թ. հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում կայացել է ԽՀՀ 13 նիստ, այդ թվում՝ ընդլայնված կազմով, որին հրավիրվել են ՀՀ Արմավիրի մարզպետարանի, Արմավիրի տարածքային միասնական սոցիալական ծառայության (ՄՍԾ), ոստիկանության, հանրակրթական ուսումնական հաստատության ներկայացուցիչներ, հոգեբան: Բոլոր նիստերի օրակարգում տեղ գտած հարցերի քննարկման արդյունքում կազմվել է համապատասխան եզրակացություն և խնամակալության և հոգաբարձության մարմնի՝ համայնքի ղեկավարի կողմից ընդունվել թվով 41 որոշում, որոնց օրինակները տրամադրվել են դիմումատուներին:

Մեծամորի համայնքապետարանը սերտորեն համագործակցել է հասարակական կազմակերպությունների հետ՝ ընդառաջ գնալով համայնքի բնակչության առանձին խմբերին սոցիալական ծառայություններ մատուցելուն ուղղված առաջարկներին, ինչպես նաև գործուն աջակցություն ցուցաբերել մի շարք սոցիալական ծրագրերի իրականացման գործում:

Մեծամոր քաղաքում գործում են «Ընտանիք և համայնք» և «Հույսի Մեծամոր» ՀԿ-ները, որոնք մի շարք հումանիտար ծրագրեր են իրականացրել սոցիալապես անապահով ընտանիքների և հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում:

Արմավիրի զարգացման կենտրոնի նախաձեռնությամբ և Մեծամորի համայնքապետարանի աջակցությամբ Մեծամոր քաղաքի մշակույթի տան փոքր դահլիճի վերանորոգումից հետո այնտեղ անցկացվել են Մեծամոր համայնքի ավագանու նիստերը, ինչպես նաև համայնքային կյանքին վերաբերվող սեմինարներ, գիտաժողովներ, կլոր սեղան քննարկումներ:

Մեծամոր համայնքում գործում է 20 բժշկական ամբուլատորիա և 7 բժշկական մանկաբարձական կետ (ԲՄԿ): Հաշվետու ժամանակահատվածում ձեռնարկվել են քայլեր համայնքում բժշկական օգնության որակի բարձրացման ուղղությամբ, որի շրջանակում 2023թ. մարտ-ապրիլ ամիսներին սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժնի պետը, առողջապահությա հարցերով գլխավոր մասնագետը և համայնքի ղեկավարի տեղակալի օգնականը աշխատանքային այցով գտնվել են բոլոր բժշկական ամբուլատորիաներում: Այցերի շրջանակում կազմակերպվել են քննարկումներ կոլեկտիվներում և ոլորտում աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ձեռք է բերվել պայմանավորվածություն, այդ թվում սերտ համագործակցություն բուժհաստատությունների և համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի միջև:

Յուրաքանչյուր ամիս համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժնի կողմից հավաքագրվել է բժշկական ամբուլատորիաների ամսական հաշվետվությունները և փոխանցվել ՀՀ Արմավիրի մարզպետարան:

Անհրաժեշտությունից ելնելով, Մեծամորի համայնքապետարանը համագործակցել է Մեծամորի բժշկական կենտրոնի հետ՝ համայնքապետարան դիմած բնակչության խոցելի խմբերին օրենքով սահմանված կարգով հասանելիք դեղորայքի ձեռքբերման, պետպատվերի շրջանակներում բժշկական ծառայություններից օգտվելու և նմանատիպ այլ խնդիրների կարգավորման հարցերի շուրջ:

2023թ. սեպտեմբերի 19-ից հետո Արցախից բռնի տեղահանված բնակչության ընդունելությունը պատշաճ կազմակերպելու և տեղավորելու համար Մեծամոր համայնքի ղեկավարի 26.09.2023 թվականի թիվ 387-Ա կարգադրությամբ ստեղծվել է ընդլայնված կազմով հանձնաժողով՝ համայնքի ղեկավարի առաջին տեղակալի գլխավորությամբ: Սահմանվել է շուրջօրյա հերթապահություն, համայնքի բոլոր բնակավայրերում իրականացվել է մեր հայրենակիցների հաշվառում և առաջնային կարիքների գնահատում: Մեծամորի համայնքապետարանի կողմից Արցախից բռնի տեղահանված ընտանիքներ են տեղավորվել Մեծամոր քաղաքում գտնվող, համայնքապատկան հյուրանոցի շենքում: Համայնքապետարանի աջակցությամբ կազմակերպվել է պետական և բարեգործական մի շարք ծրագրերով ստացված հումանիտար օգնության բաշխման աշխատանքները:

2024 թվականի հունվար ամսվա դրությամբ Մեծամոր համայնքում տեղավորվել է 415 ընտանիք՝ 1628 շնչով:

2023թ. հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում համայնքում գրանցվել է շուրջ 700 ծնունդ:

Հաշվետու ժամանակահատվածում բնակարանային պայմանների բարելավման նպատակով բնակչության առանձին խմբերից (զոհված, անհետ կորածի, զինհաշմանդամի ընտանիքներ) Մեծամոր համայնքի բնակարանային հարցերի հանձնաժողովը ստացել է 8 դիմում, որոնք քննարկման են դրվել հանձնաժողովի նիստերում, կազմվել համապատասխան եզրակացություն: Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2018թ. դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» N1419-Ն որոշմամբ և հիմք ընդունելով բնակարանային հարցերի հանձնաժողովի եզրակացությունները, Մեծամոր համայնքի ղեկավարն ընդունել է բնակարանային պայմանների բարելավման ցուցակում հաշվառելու մասին որոշումներ, կազմվել բնակարանային գործեր և ՀՀ կառավարության նշված որոշմամբ հաստատված Ձև N4 ամփոփացուցակը սահմանված կարգով ուղարկվել ՀՀ Արմավիրի մարզպետարան՝ ՀՀ պաշտպանության նախարարությանը համապատասխան միջնորդություն ներկայացնելու համար:

Գյուղատնտեսության բնագավառում

2023 թվականի ընթացքում Մեծամոր համայնքում իրականացվել են գյուղատնտեսության և բնապահպանության ոլորտի հետևյալ միջոցառումները.

1. Մեծամոր համայնքի 14 բնակավայրերում իրականացվել է գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի փոփոխություն. մասնավորապես՝ ներկայացվել է հողատեսքի փոփոխման 256 դիմում: Դրանց հիման վրա տրամադրվել է բարձրարժեք հողատեսքը ցածրարժեքի փոխադրելու 61 և ցածրարժեքը բարձրարժեքի փոխադրելու համայնքի ղեկավարի 195 որոշում:

2. 2023 թվականի ընթացքում վերականգնվել են թվով 10 խորքային հորեր Մեծամոր համայնքի Եղեգնուտ (2 խորքային հոր), Արազափ, Մարգարա, Արմավիր, Տարոնիկ, Բամբակաշատ, Ջրաշեն, Ակնալիճ, Նոր Արմավիր բնակավայրերում:

3. Իրականացվել է համայնքի բնակավայրերում մշակաբույսերի ամենամսյա հաշվառում և ամփոփ տեղեկատվությունը ներկայացվել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության Արմավիրի մարզային տեսչություն:

4. Համայնքի 31 բնակավայրերում իրականացվել է անասնագլխաքանակի ամենամյա հաշվառում և ներկայացվել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության մարզային տեսչություն:

5. Համայնքի բոլոր բնակավայրերում իրականացվել է համայնքային ենթակայության 121 հակակարկտային կայանների վերականգնման աշխատանքներ և շահագործման վերահսկողություն:

6. Իրականացվել է հողօգտագործողների կողմից մշակված խաղողի մթերման աշխատանքների վերահսկում, մթերված խաղողի քանակների հաշվառում և ճշգրտում «Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ Արմավիրի մասնաճյուղում:

7. Մեծամոր համայնքի Արգավանդ, Եղեգնուտ, Գետաշեն, Արևիկ, Փշատավան, Նոր Արտագերս, Ջանֆիդա, Այգեշատ, Արտաշար բնակավայրերում կազմակերպվել և իրականացվել են հանրային քննարկումներ ԱԿԽ հանքավայրերի արդյունահանման ուսումնասիրության և երկրաբանական աշխատանքների վերաբերյալ:

8. Համայնքի բնակավայրերում գտնվող թվով 7 ԱԿԽ հանքավայրերում արձանագրվել են ավազի ապօրինի արդյունահանման դեպքեր, արձանագրվել են խախտումներ, հարուցվել են վարչական վարույթներ:

Մեծամոր համայնքի ղեկավար՝ **Վահրամ Խաչատրյան**